րովին ապահովում էր: Վիշապները վաղուց ոչնչացած էին: Նրանց փոխարէն մնացել էին մարերը, օձերը, վերջին ժամանակի քուրդերը: Քաղաքակրթութեան լոյսի առաջ չդիմացան նրանք: Քաղաքակրթութիւնը իր անողոք պայմաններով լուծեց, մաշեց նրանց, որովհետեւ իր հետ առաջ գնալ չկարողացան: Նրանց կեանքը զարգացել եւ կազմակերպել էր խաւարի եւ անկարգութեան մէջ: Նրանց ապրուստը հայթայթել էր կոպիտ ուժի եւ բռնաբարութեան մէջ: Կարգը, արդարութիւնը զրկեցին նրանց թէ ապրուստից եւ թէ կեանքից: Ուրիշի վաստակով ապրող հասարակութիւնը մեռաւ, երբ նրան ստիպեցին իր հաշոով ապրել: Եւ այսպէս, այն գազանները, որոնց բարբարոսութիւնները ոչ մի զօրութեամբ հնար չէր լինում զսպել, ընկճոեցան, տրորոեցան քաղաքակրթութեան երկաթեայ պայմանների ներքոյ: Սրի եւ արեան մրցութեան մէջ նրանք դիմացան, բայց կուլտուրական մրցութիւնը սպանեց նրանց: Նրանց մեծ մասը թողեց այդ երկիրը եւ գաղթեց որոնելու այնպիսի տեղեր, ուր հնարաւոր կը լինէր անկարգ անիշխանութեան մէջ դարձեալ անձնատուր լինել անզուսպ կամայականութեան: Մնացածներից աւելի ազնիւ եւ ընդունակ ցեղերը սկսեցին ընտելանալ քաղաքակրթութեան հետ, իսկ վայրենիները դարձան բանոորներ այն հարեւանների, որոնք կուլտուրայով աւելի զօրեղ եւ բարձր էին իրանցից: Որսորդի բոլոր հովիւները, ախոռատան ծառաները, անդաստանների մշակները քուրդեր էին:

Գ

Վան քաղաքի միեւնոյն առեւտրական պանդոկի մէջ, միեւնոյն կրպակում, ուր մի ժամանակ թումաջի վաճառականութիւն էր անում մուսուլցի խօջայ Թորոսը, այժմ ընդարձակ գրասեղանի ետեւում նստած էր մի պարոն: Այդ կրպակը նոյնքան կերպարանափոխել էր, որքան պարոնը, որ նստած էր այնտեղ: Հին, ասիական կրպակը մի եւրոպական առեւտրական տան կատարեալ ձեւն էր ստացել. հաշոապահը, գանձապահը, գրագիրները, գործակատարները, իւրաքանչիւրը իր որոշ տեղն ու պաշտօնն ունէր: Վաճառքների տեսակները, քանակութիւնը, որակութիւնն անգամ փոխել էր: Փոխել էր եւ պարոնը, որ նստած էր ընդարձակ գրասեղանի ետեւում: Երիտասարդական հասակում նա այնքան խոշոր մարդ չէր, իսկ ծերութիւնը աւելի փոքրացրել էր նրան: Մեծ, ընդարձակ գրասեղանի ետեւից հազիւ երեւում էր նրա կուրծքի վերին մասը, փոքրիկ գլխի հետ, որ պատած էր երկար, սպիտակ մազերով: Այդ պատկառելի ալիքների միջից դուրս էր նայում մի մտասոյզ դէմք, նեղ, անհանգիստ աչքերով, որ արտայայտում էին մի գոր-